ՆԱԽԱԳԻԾ-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» նոյեմբերի 2011թ. N---Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ>> N 55-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 35-րդ կետի 1-ին ենթակետի թ) պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«թ. հանքային իրավունք ունեցող անձանց տրամադրված լեռնահատկացման ակտի սահմաններում գտնվող հողամասերի համար՝ 3 տոկոս, բացառությամբ Ծրագրի 35-րդ կետի 1-ին ենթակետի ժ) պարբերության»:

2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 35-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ ժ) պարբերությամբ.

«ժ. ընդերքի օգտագործման իրավունք ունեցող և այն շահագործող անձանց լիցենզային (կոնցեսիոն) պայմանագրով տրամադրված ընդերքի տեղամասերի զբաղեցրած հողամասերի համար՝ 7 տոկոս»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ>> N55-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 35-րդ կետի 1-ին ենթակետի թ)պարբերության համաձայն՝ վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը սահմանվում է հողամասերի կասադաստրային արժեքի, հողի վարձակալության դեպքում, ընդերքօգտագործման լիցենզիա ունեցող սուբյեկտների զբաղեցրած հողամասերի համար՝ 7 տոկոս:

Առկա են դեպքեր, երբ ընդերքի օգտագործման իրավունք ունեցող և այն շահագործող անձանց օգտակար հանածոների արդյունահանման համար լեռնահատկացման ակտով օգտակար հանածոների արդյունահանման և ստորերկրյա կառույցների շինարարության նպատակով տրամադրված մակերեսը մեծ է լիցենզային (կոնցեսիոն) պայմանագրի հիման վրա ընդերքի տեղամասերի ուսումնասիրության և (կամ) շահագործման համար տրամադրված մակերեսների չափերից, քանի որ ընդերքօգտագործման լիցենզիա ունեցող սուբյեկտների զբաղեցրած հողամասերը ընդգրկում են ինչպես ընդերքի տեղամասերը, այնպես էլ հանքարդյունահանման՝ օգտակար հանածոների արդյունահանման և շահաագործման համար տրամադրված հողամասերը:

Հարցի կարգավորման համար առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 35-րդ կետի 1-ին ենթակետում կատարել փոփոխություն և լրացում՝ տարանջատելով ընդերքի տեղամասերը արտադրական և այլ նշանակության տարածքների զբաղեցրած հողամասերից և վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը՝ ընդերքի օգտագործման իրավունք ունեցող և այն շահագործող անձանց լիցենզային (կոնցեսիոն) պայմանագրով տրամադրված ընդերքի տեղամասերի զբաղեցրած հողամասերի համար սահմանել հողամասերի կադաստրային արժեքի 7 տոկոս, իսկ հանքային իրավունք ունեցող անձանց տրամադրված լեռնահատկացման ակտի սահմաններում գտնվող այլ հողամասերի համար՝ 3 տոկոս:

Առաջարկության ընդունման դեպքում ընդերքի օգտագործման իրավունք ունեցող և այն շահագործող անձինք վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասերի համար կվճարեն հողամասերի կասադաստրային արժեքի 7 տոկոսի չափով՝ միայն ընդերքի տեղամասերի զբաղեցրած հողամասերի համար, իսկ մյուս հողամասերի համար՝ 3 տոկոս:

«Երևանի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ